«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մեթոդիստ՝ Ֆլորա Նազարյան

Մանկապարտեզ՝ «Կոթիի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..... 2

ԳԼՈՒԽ 1

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1 Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները..... 3

1.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը..... 7

Գլուխ 2

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց։

2.1 Հետազոտության ընթացքը.....9

2.2 Ինտեգրված պարապմունքների օրինակներ.....13

Եզրակացություն.....……...18

Գրականության ցանկ….....…….....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում ուսուցման հիմնական ձևը պարապմունքն է: Հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական,հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը: Ինտեգրված պարապմունքները միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ պարապմունքի օրինակներ:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:

Հետազոտական աշխատանքի **նպատակն** է բացահայտել ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**՝

Դիտարկել ինտեգրված պարապմունքների առանձնահատկությունները

ԳԼՈՒԽ 1.

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները

«Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում:Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ, որի ստեղծողները երեխաներն են ... Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի մյուս

առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարե՛ք այնպես, որ կյանքի այդ պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույ ներով»

Վ.Սուխոմլինսկի

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերա-կանգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց (երաժշտության, գրականության, նկարչության ստեղծագործությունների միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է «տրամադրությունը»): Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է

ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր պարապմունքը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված պարապմունքն անցկացնող ուսուցիչների պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:
Ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում է երեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը՝ պարապմունքի տվյալ ձևի կիրառմամբ:Նախադպոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Եվ այդ զարգացման ամենատարածված միջոցներից է հատուկ կազմակերպված ուսուցման գործընթացը՝ ինտեգրված պարապմունքը: Խաղը նախադպրոցականի հիմնական կենսաձևն է, որը միշտ մնում է սիրված զբաղմունք: Խաղի դերը մեծ է երեխայի դաստիարակության և ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Հայ մեծանուն բանաստեղծ Հովի. Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Ուսումնական գործընթացում խաղն ու պարապմունքը պետք է հանդես գան միաժամանակ՝ լրացնելով միմյանց: Այսօր առավել արդյունավետ է նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդը: Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներն են՝

- երեխայի համակողմանի դաստիարակությունը, կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը.

- տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը։

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

● միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)

● բազմառարկայական -(երկուսից ավել առարկաներ միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն)

Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրական հասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր միջոցներ: Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ: Մասնագիտական ուսումնասիրություններում մանրամասն վերլուծվել է ինտեգրված պարապմունքը՝ թե բովանդակային, թե կառուցվածքային կողմերով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից:[1] Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար:

1Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում (մեթոդական ուղեցույց մանկապարտեզների դաստիարակների համար)

Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ «Ջուր», «Տարվա եղանակներ», «Կենդանական աշխարհ», «Տոնածառ», Բնություն», «Հաց», «Անտառ», «Իմ մանկապարտեզը», «Հայրենիք», «Մարտի 8», «Ամանոր», «Հայոց բանակի օր», «Անվտանգ վարքագիծ» և այլն:

1.2 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական նգեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում ենգործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվողփոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմաուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաների առաջարկվում են հետաքրքրիր թեմաներ կենսական հարցերի շուրջ:
Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը:[2]

Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնականտեղ հատկացնելով ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է :

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- Նոր մեթոդների կիրառում,
- Փոխազդեցություն, փոխուսուցում,

[2] Ժան Ժակ Ռուսո <<Նախաշավիղ 2>> 2016թ

• Երեխայի ակտիվություն,

• Համագործակցություն

• Ինքնաարտահայտման խրախուսում

• Հետադարձ կապ և այլն:

Պարապմունքի ձևի ընտրությունը, ըստ մեթոդների, որոշում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: եթե տվյալ թեման կարելի է մատուցել խաղի, խաղ- պարապմունքների, էքսկուրսիաների կամ ինտեգրված պարապմունքերի ձևով, ապա դաստաիարկն այդ ընտրությունը ամրագրում է պլանավորման մեջ:Այն չի կարող ինքնանպատակ լինել կամ կամյական բնույթ կրել այլ պայանավորված է՝

• Ուսուցման նպատակներով և խնդիրներով,

• Ուսուցանվող նյութի բովանդակությամբ, ծավալով և բարդությամբ,

• Երխաների պատրաստվածության մակարդակով

• Տարիքային առանձնահատկություններով,

• Երեխաների թվաքանակով,

• Դաստիարակի պատրաստվածության մակարդակով:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման պայմաններն են.

• Աշխատանքում պետք է ներգրավված լինեն բոլոր երեխաները,

• Եթե տվյալ տարիքային խումբը մեծաքանակ է , ապա արդյունավետ է աշխատանքը կազմակերպել

• փոքր խմբերով:

• Փոքր խմբերով աշխատանքի դեպքում բոլորը պետք է արտահարտվելու հնարավորություն ունենան, յուրաքանչյուր ենթախումբ ն երկայացնելու է խնդրի վերաբերյալ իր տեսակետը:

• Հարկավոր է խմբասենյակը նախապատրաստել այնպես, որպեսզի երեխաները հեշտությամբ աշխատեն մեծ և փոքր խմբերով:Ցանկալի է , որ նստելու դիրքը և ափոռների դասավորությունը նպաստեն դրան: Աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը պետք է պատրաստել նախապես: Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք, որի ընթացքում դաստիարակը կկիրառի նոր մեթոդներ:

Ավելի հաճախ դրանք անհրաժեշտ է օգտագործել, որպես ամենօրյա պարապմունքներ, որոնք ամենևին կարիք չունեն նախապես երեխաներին նախապատրաստելու: Նման պարապմունքները արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է միայն պլանավորել պարապմունքի ամբողջ ընթացքը, հստակ ձևակերպել նպատակները, նախապատրաստել անհրաժեշտ նյութերը ըստ ենթախմբերի:

Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաներն աստիճանաբար սովորում են ինքնուրույն աշխատել և այդ կերպ ձևավորվում են հետազոտական հմտություններ և կարողություններ: Նրանք սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքները այս կամ այն հարցի շուրջ: Կարողանում են ամփոփել իրենց սովորածը և իմացածը՝ ընտրած թեմայի շրջանակում: Կատարում են համեմատություններ և գտնում տարբերությունները, ազատ և անկաշկանդ երևակայությամբ ստեղծագործում են և ներկայացնում իրենց կատարած աշխատանքները: Սովորում են կարծիք հայտնել ընկերոջ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև:[3]

[3] Լալա Սմբատյան <<Նախաշավիղ>> 2015թ

Գլուխ 2

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց:

2.1 Հետազոտության ընթացքը

Խումբ - միջին

Տևողությունը - 25-30 րոպե

Թեմա- Տարրական մաթեմատիկական պատկերացումներ և նկարչություն

Պարապմունքի անցկացման համակարգ- ԽԻԿ

Կիրառվող մեթոդներ - ինտերակտրվ մեթոդ

Նպատակը.

. Պատկերացում ձևավորել թվաբանական պարզ խնդրի վերաբերյալ, սովորեցնել կազմել գումարման խնդիրներ, ճիշտ ձևակերպել խնդրի պատասխանները:

. Ամրապնդել և ճշտել նախկինում ձեռք բերած գիտելիքները 2 և 3 թվերի կազմությունը, հաշիվ՝ 1-3 թվերի սահմանում:

. Ամրակայել պատկերացումներ՝ հիմնական գույների մասին, սովորել հիմնական գույների միջոցով ստանալ բաղադրյալ գույներ:

. Զարգացնել հետաքրքրասիրությունը, գեղագիտական ճաշակը, տրամաբանական մտածողությունը, քերականական ճիշտ և կապակցված խոսքը:

. Ձևավորել համագործակցային հմտությունները:

Հետազոտական աշխատանքի իրականացման համար օգտվել եմ զննման , դիտման, զրույցի, ինչպես նաևկիրառել եմ ինտերակտիվ մեթոդներ՝ մտագրոհ, ենթախմբերի բաժանում , հարցեր հարցադրումներ:

Պարապմունքի պլանը

Անհրաժեշտ նյութեր՝

- Սև մատիտ, ջրաներկ, նկարչական թուղթ ,
- փորձաթուղթ, 1-3 թվանշաններով քարտեր
- Ցուցադրական նյութ՝ պարզ խնդիրների տեսքով
- Բաշխիչ նյութեր՝ երեխաների թվով երկգծանի քարտեր,
- թվային պատկերներ՝ 1,2,3
- Գունավոր ծաղիկներ՝ ըստ խմբերի քանակի,
- խաղ-մրցույթի համապատասխան պատասխաններին համապատասխան

Պարապմունքի ընթացքը

Խթանման փուլ /3-5ր./

Երեխաները դաստիարակի օգնությամբ վերհիշում են հիմնական գույները:

Դաստիարակ- Նայե'ք ձեր շուրջը և ասացե'ք՝ ի՞նչ հիմնական գույների առարկաներ եք տեսնում:

Իսկ ի՞նչ առարկաներ կան ոչ հիմնական գույների:

Նշե'ք երկու առարկա , որոնք կարող են լինել միայն կապույտ գույնի:

Նշե'ք երեք առարկա , որոնք կարող են լինել միայն կարմիր գույնի:

Նշե'ք մեկ առարկա, որը լինում է միայն դեղին գույնի:

Ի՞նչ տեղի կունենա, եթե խառնենք երկու հիմնական գույներ:

Իմաստի ընկալում

Խումբ բաժանվում է ենթախմբերի 4-6 հոգանոց: Յուրաքանչյուր ենթախումբի տրամադրել սև մատիտ, ջրաներկ, նկարչական թուղթ, փորձաթուղթ:

Առաջարկվում է հիմնական գույներին ավելացնել առաջարկվող գույնը և փորձաթղթի վրա ստանալ նոր գույն: Հիմնական և նոր ստացած գույներն օգտագործելով՝ նկարել ծաղիկներ, կազմել պարզ գումարման խնդիրներ:

Ամբողջ խումբը ստանում է նույն հանձնարարությունը:

-Ունենք մեկ հիմնական գույնի ծաղիկ, դրան ավելացնում եք ևս մեկ սպիտակ ծաղիկ:

Երեխաները նկատում են , որ խմբի անդամները՝ օգտագործելով նույն գույները,ստանում են տարբեր երանգի ծաղիկներ:

Երեխաները պետք է մեկնաբանեն գունային հրանգի ստացման եղանակները և բացատրեն, թե ինչու՞ է այդպես ստացվում:

Օրինակների քանակը պետք է շատ լինի, որպեսզի երեխաներն ունենան ընտրության հնարավորություն:

Հետազոտությունն իրականացնում ենք հետևյալ նպատակով՝

Զնավորել երեխայի հոգեկան գործընթացը՝ հիշողություն, ուշադրություն, մտածողություն, երևակայություն:

Հետազոտական աշխատանքի ընթացքը

Հետազոտությունը կատարվել է «Կոթիի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում 2023թ-ի դեկտեմբերի 4-ից մինչև 8-ը: Իմ կողմից որպես հետազոտական առանցք ընտրվել է միջին նախադպրոցական տարիքի 26 երեխա:

2.2 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհարժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում: Պարապմունքներն անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն:

Օրվա կանոնակարգը փոփոխվում է տարվա ցուրտ ու տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն: Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-12 կամ 10-15 րոպեանոց ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար:

Պարապմունքի թեման՝ «Ձմեռ» ինտեգրված պարապմունք՝ խոսքի զարգացման, ծանոթ. շրջ. միջ. ծեփակերտման, ապլիկացիայի և երաժշտության մեթոդիկաներից:

Միջին խումբ Նպատակը

Կրթական:Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կենդանիների, բույսերի, բնության մեջ մարդու աշխատանքի վերաբերյալ: Ձևավորել ընդհանուր պատկերացում ձմռան մասին, ընդլայնել պատկերացումները ձմռան բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ, ձևավորել մտքերն ինքնուրույն արտահայտվելու, հարկ եղած դեպքում ձեռք բերած գիտելիքներն օգտագործելու կարողություն:

Զարգացնող: Զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը: Ճշգրտել երեխաների տպավորությունները Ամանորի, Սուրբ ծնունդի տոնակատարարությունների վերաբերյալ:

Բառապաշարի հարստացում: Գործնականորեն իրականացնել արծաթափայլ, պսպղուն, սպիտակ, ճերմակ, փայլփլուն, փաթիլներ, ամենասառն, ցուրտ, բուք, սառնամանիք, թարմություն, ձյունապատ, ձյունաթույր, ձյունաճերմակ, սպիտակաթույր բառերի ուսուցումը:

Անհրաժեշտ պարագաներ՝ կտրտած փաթիլներ, եղննի,փայլփլուն խաղալիքներ, շղթաներ, ձմեռային տեսարան պատկերող նկարներ, նկարներ(վերատպություններ),գունավոր լույսեր:

Պարապմունքի ընթացքը.

Նպատակահարմար է զրույցը սկսել ձմռան մասին հանելուկով:Այդ ընթացքում,որպես շարժառիթ, հնչում է հատված Շոպենի երաժշտությունից.

Հանելուկ՝ 《Ո՞վ է եկել》

Ո՞վ է եկել տանիքներին

Սավան փռել այս գիշեր,

Սառցե մատով պատուհանին

Նախշեր քաշել այս գիշեր...(ձմեռ)

Երեխաների պատասխանները լսելուց հետո կարելի է առաջարկել նկարագրել օրվա եղանակը տվյալ պահին և կատարել համապատասխան նշումներ բնության օրացույցում

Դաստիարակ-Այժմ տարվա ո՞ր եղանակն է։

Երեխաներ-ձմեռ է։

Դաստիարակ -Երեխանե՛ր, այժմ եկեք պատմենք,թե ի՞նչ գիտենք ձմռան մասին։

- Ինչպիսի՞ն է ձմեռը։ Օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում ձմեռը։

- Որոնք են ձմռան ամիսները։(Ձմռան ամիսներն են՝ դեկտեմբեր,հունվար,փետրվար)։

- Ի՞նչ տոներ ենք նշում ձմռանը։(Ամանոր,Սուրբ ծնունդ, Բանակի օր և այլն)։

- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում կենդանական և բուսական աշխարհում

Երեխաներ Եղանակը ցրտում է։ Այլևս ո՛չ ծառերի փչակում մեղր կա, ո՛չ էլ թփերի վրա՝ հատապտուղ։ Արջը քնել է իր որջում։ Կենդանիներն ու բույսերը քնում են ձմռան սպիտակ վերմակի տակ։ Երկնքից թափվում են ձյան ճերմակու պսպղուն փաթիլները։

Դաստիարակ Երեխանե՛ր,իսկ ինչո՞վ են ձմռանը սնվում ձմեռող թռչունները։

Երեխաներ Նրանց կերակրում են բարի մարդիկ ցորենի հատիկներով,հացի փշրանքներով։

Դաստիարակ Էլ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում ձմռանը բնությանմեջ։

Երեխաներ. Ձմռանը եղանակը ցրտում է,երկնքից անդադար թափվում են ճերմակ ու արծաթափայլ ձյան փաթիլները։Տանիքից կախվում են սառցե կտորները։

Դաստիարակ Երեխանե'ր, քանի որ դուք նկարագրեցիք ձմեռը, այժմ ժամանակն է արտասանենք բանաստեղծություններ ձմռան մասին.

Փափուկ ձյուն

Ձյուն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,

Զգույշ իջիր դաշտերին,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին։

Հանդարտ,կամաց իջիր այնպես,

Ծաղիկները չարթնանան,

Ծածկիր նրանց քնքուշ ու հեզ,
Զգույշ,զգույշ անսահման։

Ձյուն, փափուկ ձյուն , սպիտակ ձյուն,
Հանգիստ, խաղաղ իջիր վար,
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար։
(Գեղամ Սարյան)

Առաջին ձյունը

- Վայ, մայրիկ ջան, տես,

- Բակն ու դուսը լի

Ինչքան սպիտակ

Թիթեռ է գալի...

Էսքան շատ թիթեռ

Չեմ տեսել ես դեռ։

- Չէ,իմ անուշիկ,

- Թիթեռներ չեն էտ,

- Թիթեռներն անցան

Ծաղիկների հետ։

Էտ ձյունն է գալիս,

Փաթիլն է ձյունի,

Որ կարծես սպիտակ

Թիթեռնիկ լինի։

Երեխաներ. Ձմռանը մեր շրջապատում ամեն ինչ ճերմակ է ու սպիտակ։

Աշխուժացնող խաղ՝ «Փաթիլներն ու քամին»

Հնչում է հատված Վիվալդիի «Տարվա եղանակները»ստեղծագործությունից:

Փաթիլները հանդարտ իրենց տեղերում են, Քամու ժամանակ սկսում են արագ պտտվել։ Իսկ հիմա ասացվածքներ ձմռան մասին:Սառնամանիքը մեծ չէ, բայց չի հրամայում կանգնել։ Հունվարը գարնան հեռավոր ավետաբեր է:

Դաստիարակ. Ի՞նչ նվիրեց մեզ ձմեռը

Երեխաներ. Ձմեռը մեզ նվիրեց մաքուր օդ, ձյուն, Նոր տարի , Ձմեռ պապ,նվերներ, տոնածառ, փայլեր,գունավոր լույսեր։

Դիդակտիկ խաղ՝ «Գտի'ր ինձ»

Նպատակը՝ Երեխաների մեջ ամրակայել փաթիլի, ձյան,ջրի, սառույցի, դրանց գույների և ձևի մասին պատկերացումները։

Խաղի համար պահանջվող նյութեր՝ քարտի վրա պատկերված փաթիլի,սառույցի և ձյան համապատասխան գույներով սկավառակըպտտող սլաք,խաղանիշներ(երեխաների մոտ)։

Խաղի կանոնները.

Դաստիարակը հարցնում է երեխաներին,թե ինչե՞ր են պատկերված խաղաքարտերի վրա,և ինչպիսի՞ գույներ ունեն դրանք։Խաղին մասնակցում են հինգ հոգի։ Յուրաքանչյուր ենթախմբում մեկ երեխա պտտեցնում է սլաքը։ Սլաքը կանգնելուց հետո երեխաներն արագ տեղադրում ենխաղանիշները՝ համապատասխան գույնի պատկերի վրա։

Կապույտ,սպիտակ,արծաթագույն

Այնուհետև երեխաներն աշխատում են արվեստի կենտրոնում՝բաժանվելովերկու խմբի։

Նկարչություն՝ ծեփի տարրերով՝ տոնածառի խաղալիքներ,փաթիլներ,ձնեմարդուկ,ձնագնդի։

Ապլիկացիա՝ համագործակցությամբ ստանալ եղևնի՝ գույնզգույն խաղալիքներով։

Պարապմունքն ամփոփվում է հետևյալ հարցերի շրջանակում.

1. Ինչի՞ մասին էինք զրուցում։
2. Ձմեռն ի՞նչ բառերով գովերգեցինք։
3. Ի՞նչ նվիրեց մեզ ձմեռը։
4. Ի՞նչ կցանկանաք, որ մեզ բերի Ձմեռ պապը։
5. Ինչպե՞ս տոնեցինք Սուրբ ծնունդը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգման , որ մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում են բովանդակալից մոտեցումը, նոր մեթոդների կիրառումը:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը:

Հետագա աշխատանքների ընթացքում ցանկալի է, որ դաստիարակներն ինտեգրված պարապմունքներն պլանավորելիս և կազմակերպելիս ապահովեն հնարավորինս բարձր մոտիվացիա :

Դիտորդների եզրակացությունը

Մանկապարտեզի տնօրենը և հոգեբանը դիտարկեցին պարապմունքները և ներկայացրին հետևյալ վերլուծությունը:

1. Դաստիարակը հասավ իր նպատակներին՝ զարգացնելով երեխաների վերլուծական մտածողությունը, ուշադրությունը,հիշողությունը, հետաքրքրասիրությունը, գեղագիտական ճաշակը:
   Ամրապնդեց տրամաբանական մտածողությունը, քերականական ճիշտ և կապակցված խոսք կառուցելու կարողությունները
   Զարգացրեց համագործակցային հմտությունները:

2.Երեխաները բավականաչափ ակտիվ էին, անկաշկանդ համագործակցում էին, կարողանում էին իրենց գիտելիքները կիրառել գործնականում:

3. Դաստիարակի կողմից ընտրված թեման կարևոր է երեխաների ճանաչողական կարողությունների զարգացման համար, աշխատասիրության, լեզվական հմտությունների ամրապնդման, համագործակցային կարողությունների ամրակայման համար:

Գրականության ցանկ

1. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ 2018թ
2. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6տարեկանների) կրթական համալիր ծրագիր 2007թ
3. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում (մեթոդական ուղեցույց մանկապարտեզների դաստիարակների համար)
4. Ժան Ժակ Ռուսո <<Նախաշավիղ 2>> 2016թ
5. https://www.prodlenka.org/metodicheskie-razrabotki/83505-integrirovannye-zanjatija-kak-sredstvo-razvit